է, որ պետական տուրքի չվճարված մասը՝ 219.200 ՀՀ դրամը (319.200 – 100.000), ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի ուժով պետք է բռնագանձել Պատասխանող ՀՀ ներքին գործերի նախարարությունից հօգուտ ՀՀ պետական բյուջեի:

Անդրադառնալով կիրառված հայցի ապահովման միջոցի հարցին՝ Դատարանը գտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը վճիռ կայացնելիս լուծում է հայցի ապահովման միջոցները պահպանելու կամ վերացնելու հարցը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը: Հայցը բավարարելու մասին վճռի կայացումից հետո հայցի ապահովման միջոցը դատարանի որոշմամբ կարող է վերացվել հայցի ապահովում պահանջած անձի միջնորդությամբ:

Դատարանը, նկատի ունենալով, որ հայցն ենթակա է բավարարման, գալիս է այն եզրահանգման, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 11.12.2025 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պետք է պահպանել մինչև վճռի կատարումը, վճռի կատարումից հետո պետք է այն վերացնել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. Ալեռտոռ ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ պայմանագրի կատարման վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրել պարտավորեցնելու, գումարի բռնագանձման պահանջների մասին, բավարարել:

1.1. Պարտավորեցնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը էլեկտրոնային գնումների համակարգի (armeps.am) միջոցով ՀԱԼԵՌՏՈ ՍՊ ընկերությանը տրամադրել վերջինիս կողմից 07.11.2025 թվականին ներկայացված՝ ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

1.2. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունից հօգուտ ՀԱԼԵՌՏՈ ՍՊ ընկերության բռնագանձել 31.920.000 ՀՀ դրամ՝ որպես մատակարարված ապրանքի դիմաց վճարման ենթակա գումար:

2. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 219.200 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի չվճարված մասի գումար:

3. Դատական ծախսերի հարցը մնացած մասով համարել լուծված:

4. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 11.12.2025 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև վճռի կատարումը, վճռի կատարումից հետո այն վերացնել:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Աննա Շիլաջյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE6F-6C52-4DBC-AF58 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը: